ՆՎԱՐԴ ԵՐՆՋԱԿՅԱՆ

ՀԱՅԵՐԻ ԴԻՑԱԲԱՆԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԱՑՈՒՄՆԵՐԸ ՀԱՄԱՍՏԵՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՍՏՂԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Ավանդութային պատկերացումների առումով կարևոր գործոն է ժամանակի ճիշտ հատվածավորումը, որ տնտեսական զբաղմունքների հերթագայման և դրանց բարեհաջողությունն ապահովող ծիսա-հմայական արարողությունների հիմնական գրավականն էր: Դիցաբանական տիեզերքի և դրա տարրերի, տվյալ դեպքում՝ համաստեղությունների և աստղերի ,,գործունեության ոլորտը,, գիշեր-այգաբաց ժամանակահատվածն է արևի օրապտույտի ընթացքում: Այսպիսով, գիշերային երկնակամարում համաստեղությունների և աստղերի երևան գալը ժամանակա-տարածական ուղեցույց է բոլոր մշակույթներում:

2. Համաստեղությունների և աստղերի հետ առնչվող հայկական ժողովրդագիտական նյութերը ուսումնասիրելիս պարզվում է, որ հիմնականում գրավոր աղբյուրներից և դաշտային նյութերից մեզ հայտնի գրեթե բոլոր համաստեղությունները /Հայկ-Օրիոն, Բազումք, Մեծ Արջ, Քարվան-Նորուս, Լուսո Աստղ, Կշեռք և այլն/ ազդակ-խորհրդանիշ են եղել ինչպես տարվա եղանակների ժամանակային տարաբաժանման, այնպես էլ տվյալ օրվա հետ կապված աշխատանքներն սկսելու համար /օր.՝ Ծամփա գնալիս կողմնորոշվելը թե ժամանակի և թե տարածության մեջ/:

3. Ուշագրավ է, սակայն, որ Հարդագողի Ճանապարհ /Ծիր կաթին/ համաստեղության մասին եղած տվյալներից ոչ մեկը չի կապվում ժամանակի ժողովրդական ընկալման հետ: Մեզ հայտնի բոլոր /գրավոր և դաշտային/ տարբերակները նկարագրում կամ բացատրում են այն իբրև ,,հետք,, , տարբեր պատճառներով առաջացած երկնային Ճանապարհ: Նույնատիպ են այն ընկալում նաև այլ մշակույթներում, որ որոշ ուսումնասիրողների հիմք է տվել Հարդագողի Ճանապարհը սահմանել իբրև հորիզոնական ուղի տիեզերքի կառուցվածքի հնագույն մոդելի մեջ:

ԱՍՏՂԻԿ ԽՍՐԱՑԵԼՅԱՆ

ՀԱԶՈՑ ԵՐԿԱԹԵ ԵՎ ՊՈՂՊԱՏԵ ՀՄԱՅԱԿԱՆ ՊԱՀՊԱՆԱԿՆԵՐԸ

/ XIX - XX ԴԴ./

1. Հայկական ժողովրդական հավատալիքներում դարեր շարունակ մեծ տեղ է տրվել երկաթի ու պողպատի գերբնական զորությանը, դրանցից սարքված զենքերին, գործիքներին, կենցաղային զանազան առարկաներին վերագրելով չար ոգիներին, հիվանդությունները, չար աչքը վանելու մոգական ուժ:

2. Երկաթից ու պողպատից սարքված առարկաները լայնորեն կիրառվել են ամենատարբեր հանգամանքներում, տարբեր ձևերով՝ սկսած տուն կառուցելուց, երբ խոփ, կողպեք, ասեղ, մետաղադրամ էին դնում հիմքում, տան դռան ճակատին, շեմին պայտ, ասեղ և այլն էին փակցնում: Երեխա ծնվելիս մորն ու մանկանը չար ոգիներից և չար աչքից պաշտպանելու համար մահճակալի, օրորոցի կողքին և մեջը շամփուր, դանակ, դաշույն, մկրատ, սանդերք էին դնում, գլխաշորերին՝ ասեղ շուլալում: Հարսանիքի ծիսակատարության անհրաժեշտ պարագաներից էին զենքերը, տարբեր տոնակատարությունների ժամանակ՝ շամփուրը, խաչերկաթը և այլն: Թաղման արարողության ժամանակ ևս մետաղները դեր ունեին. չար ոգիներին վանելու համար երկաթե որևէ առարկա էին դնում դագաղի մեջ, ինչպես նաև այն վերցնելուց հետո՝ նրա տեղում: Երկաթե ու պողպատե առարկաներով պաշտպանում էին կենդանիներին՝ նրանց վզից այդ մետաղներից սարքված հմայական պահպանակներ կախելով: Բնության տարերքի դեմ պայքարելու համար ևս մարդիկ դիմում էին այս մետաղների օգնությանը. կարկուտի դեմն առնելու նպատակով խաչերկաթը զցում էին տան դռան առջև, իսկ անձրևը դադարեցնելու համար խաչերկաթը կրկին տնից դուրս էին հանում և վրան աղ ցանում:

3. XIX - XX դդ. Երկաթից ու պողպատից պատրաստում էին նաև շրջանաձև հմայական պահպանակներ /մատանի, ապարանջան, վզնոց/, որոնք պաշտպանում էին քաջքերից, ալքերից, սատանաներից, դևերից, ջաղուներից, խորթլաղներից, զաբուսից, չար աչքից ու կայծակից: Սրանք կոչվում են ուրբաթարուր, ուրփթի դող, ուրփաթավուրի բլազուկ, անժմի. պատրաստվում էին Ջատկին նախորդող չարշաբաթաց ուրբաթ, երբեմն հինգշաբթի օրերը, որոշակի կանոններով:

4. Բացի նյութից /մետաղ/, մեծ կարևորություն էր տրվում ձեվին՝ շրջանին, որը սրբազան էր և պիղծ ոգիները չէին կարող ներթափանցել նրա մեջ: Այդուհանդերձ, ձևերը սահմանափակ են՝ հոծ օղակ, սրվող ծայրերով օղակ և երկու ծայրերը ետ կեռացրած շրջանակ, որն օգտագործելիս թելով էր կապվում: Սրանք լինում են հարթ կամ ոլորանախշերով: Տարբեր առիթներով /զարնանամուտին, Համբարձման տոնին և այլն/ տան ներսը, տանիքին՝ երդիկի շուրջը, մեծ մասամբ երկաթե առարկայով շրջան էին գծում տունն ու կենդանիներին չար ոգիներից պաշտպանելու միտմամբ: Այսպիսի գծերը փրկում էին նաև հիվանդներին ու ծննդկաններին: Վզնոցները, ոտի, ձեռքի օ-

ղակները, մատանիները նույն դերն էին կատարում, ըստ որում սրանց շարքն էր դասվում նաև զոտին՝ անկախ նյութից:

5. Հիմնականում վզնոցները, բացի չար աչքից ու չարքերից պաշտպանելուց, օգտագործվում էին նաև որպես զրավ՝ սրբատեղիներում: Հիվանդները դրանք կրում էին մինչև ապաքինվելը, այնուհետև տանում թողնում էին սրբատեղիում հիվանդությունն այնտեղ թողնելու հավատքով:

6. Ուշագրավ է, որ ինչպես հավատքը, այնպես էլ այս պահպանակների ձևերը, առանց փոփոխության գալիս են ուշ բրոնզի և վաղ երկաթի դարաշրջանից, հասնելով մինչև XX դ. սկզբները: Հնագույն հավատալիքներում երկաթն ու պողպատը երկնային ծագում են ունեցել, եղել են կայծակի մարմնավորումներից: Հատկապես սա է պատճառը, որ մարդիկ չարքերից ու կայծակից պաշտպանելու զորություն են վերագրել այս մետաղներին:

Մեր օրերում մետաղե օդակաձև պահպանակներ չեն պատրաստվում, սակայն ժողովուրդը սովորույթի ուժով շարունակում է կենցաղային երկաթե ու պողպատե առարկաներն օգտագործել որպես հմայական պահպանակ:

ՋԱՎԵՆ ԽԼՌԱՏՅԱՆ

ԹԵՍԱՆ ՀԱՅԵՐԻ ԱՄՈՒՍՆԱ-ՀԱՐԱՆԵԿԱՆ ՍՈՎՈՐՈՒՅԹՆԵՐՈՒՄ /XIX Դ.ՎԵՐՋ - XX Դ. ՍԿԻԶԲ/

Հայ պատմա-ազգագրական գրականության մեջ ամուսնա-հարսանեկան սովորույթները տակավին չեն ենթարկվել թեմատիկ-մենագրական քննության, մինչդեռ սոցիո-նորմատիվ մշակույթի այդ ոլորտի գիտական ուսումնասիրությունը հույժ շահեկան կալող է լինել ոչ միայն ժողովրդի ծիսական կյանքի ամփոփ պատկերը ներկայացնելու, այլև էթնիկ մշակույթի բազում այլ կարևոր մանրամասներ բացահայտելու առումով: Այս տեսակետից հետաքրքրության է արժանի նաև նշված ծիսակարգը կատարողների ու մասնակիցների կազմի բնութագրումը:

Ջեկուցման մեջ այդ հարցը դրվում է փեսային, նրա սոցիալ-իրավական ու բարոյական կերպարին առնչվող ամենատարբեր ծեսերի ու սովորույթների համակողմանի դիտարկման տեսանկյունով: Ըստ որում, նկատի է առնվում ,,փեսա,, հասկացության այն մակարդակը, երբ նա փեսա է ողջ համայնքի աչքում, հարսանյաց հանդամանքներում, բայց դեռևս հիմնովին չի մտել ազգակցական համակարգ:

2. Ձեռքի տակ եղած զրավոր ու դաշտային ազգագրական բազմաբովանդակ նյութերի համադրումն ի հայտ է բերում մի պատկեր, որը,